# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

*0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5*

№ ԴԴ-3- Ն-1524

«21» մարտի 2014 թ.

**«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի**
**շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/11»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան 2014թ. ապրիլի 02-ը, ժամը 11:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի գնումների համակարգման բաժնի մասնագետ Մ.Հայրապետյանը (հեռ. 010 511 788, 010 511 787 ):

Հայտերը կբացվեն 2014թ. ապրիլի 02-ին, ժամը 11:00-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերումը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների (կազմված է 37 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը կներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:***

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

Առդիր՝ 35 թերթ:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**

**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝** **ՌՇՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ՝. Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 511-788, 511-787